
Շաբաթական ամփոփ ակնարկ

Մակրո | Բաժնետոմսեր | Պարտատոմսեր |
Կրիպտոարժույթներ | Հաշվետվություններ |
Ֆյուչերսներ



Բարձրանում ենք միասին

09 Նոյեմբեր 2026

Սույն «Շաբաթական ակնարկ» վերլուծությունը կազմվել է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի կողմից և կարող է օգտագործվել **միայն որպես ընդհանուր բնույթի տեղեկություն:** Վերջինս արդիական է հրապարակման օրվանից շուկայի վարքագծով պայմանավորված ողջամիտ ժամկետում: «Շաբաթական ակնարկ» վերլուծական հաշվետվությունը կազմվել է ներկայումս հասանելի **հանրային տեղեկատվության** հիման վրա, որն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ը համարում է վստահելի: Սակայն, ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **չի երաշխավորում,** որ այդ տեղեկատվությունը հանդիսանում է լիարժեք և արժանահավատ, և, հետևաբար, այն **չպետք է ընկալվի որպես խորհուրդ կամ առաջարկ՝ որևէ ֆինանսական գործարք իրականացնելու դեպքում:**

«Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ ներկայացված գործիքների ընտրությունը պայմանավորված է **շուկայի ընդհանրական մոտեցմամբ**, բարձր շրջանառության ծավալ ու հանրային լայն ընկալում ունեցող ընկերությունների բաժնետոմսերի նկատմամբ հաշվետու ժամանակահատվածում ձևավորված մեծ հետաքրքրությամբ: Հետևաբար, ընտրված ներդրումային պրոդուկտները կարող են **չհամապատասխանել բոլոր ներդրողների ցանկություններին և պահանջներին**: Ներդրումներ իրականացնող ցանկացած անձ պետք է **անհատապես ուսումնասիրի և յուրովի գնահատի** իր ներդրումային հնարավորությունները, ներդրումային պորտֆելի կառուցվածքը և դրանցից բխող ռիսկերը բոլոր կամ առանձին վերցրած ակտիվների գծով: Նախքան որևէ ներդրումային որոշում կայացնելը կամ գործարք իրականացնելը, յուրաքանչյուր ներդրող պետք է ուսումնասիրի այն տեղեկատվությունը, որը պարունակում է ռիսկերի, միջնորդավճարների և հնարավոր այլ ծախսերի նկարագրությունը: Յուրաքանչյուր ներդրող պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի **ռիսկ/եկամուտ հարաբերակցությանը** և համոզվի, որ ներդրումը համապատասխանում է վերջինիս ներդրումային նպատակներին:

Հնարավոր կորստի կամ եկամտի ցանկացած կանխատեսում **զուտ նկարագրություն** է և չպետք է դիտվի որպես հնարավոր առավելագույն կորստի կամ շահույթի սահմանափակում: Ներդրումները **երաշխավորված կամ ապահովագրված չեն ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ** կամ այլ ֆինանսական ընկերության կամ որևէ տեղական ինքնակառավարման մարմնի կամ ապահովագրական գործակալության կողմից, հետևաբար **բախվում են ներդրումային ռիսկերի հետ**, ներառյալ՝ **ողջ գումարի հնարավոր կորստի ռիսկը:** Ներդրողներն, ովքեր ներդրումներ են կատարում արտարժույթով, պետք է տեղյակ լինեն փոխարժեքի տատանումների ռիսկի մասին, որը կարող է հանգեցնել ներդրված գումարի կորստի:


ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն ենթադրում է, որ հաճախորդը նախքան ներդրումներ իրականացնելը, **գիտակցում և տեղյակ է գործարքի հետ կապված ցանկացած հարկային և իրավական** պարտավորությունների մասին: ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն **պատասխանատվություն չի կրում** այն բոլոր ուղղակի, անուղղակի հնարավոր **վնասների համար**, որոնք առաջացել են «Շաբաթական ակնարկ» վերլուծության մեջ առկա տեղեկատվության և հետևությունների մասնակի կամ ամբողջական օգտագործման հետևանքով:

Շուկաները նախորդ շաբաթ՝ ամփոփ


Նախորդ շաբաթ ԱՄՆ բաժնետոմսային ինդեքսները արձանագրեցին բացասական եկամտաբերություն:




Ներդրողները պատրաստվում են գնաճի հաջորդ ալիքին:



Բաժնետոմսերի անկումը գլխավորեց տեխնոլոգիական ոլորտը:



Նախորդ շաբաթ պարտատոմսերը արձանագրեցին բացասական եկամտաբերությունները:




Նախորդ շաբաթ S&P500-ը նվազեց 2.70%-ով

Նախորդ շաբաթ Nasdaq-ը նվազեց 4.98%-ով






Նախորդ շաբաթ Dow Jones-ը նվազեց 0.95% -ով




Նախորդ շաբաթ Russell 2000-ը նվազեց 2.03%-ով



Բաժնետոմսերի շուկաներում սկզբնական կտրուկ անկումը հատեց մի շարք կարևոր տեխնիկական մակարդակներ, ինչից հետո վաճառքի ճնշումը շարունակվեց: Արդյունքում Nasdaq 100-ը իջավ նույնիսկ ընտրությունների գիշերը գրանցված նվազագույնից ցածր՝ նախընտրական փակման մակարդակի համեմատ արձանագրելով ավելի քան 5% անկում:




Որպեսզի ամեն ինչ միանգամայն հստակ լինի՝ շուկայի այս կտրուկ անկման հիմքում քաղաքական գործոնն է՝ ճիշտ այնպես, ինչպես ընտրությունների գիշերը: Միջանկյալ ընտրություններում դեմոկրատների՝ Կոնգրեսի երկու պալատներում էլ մեծամասնություն ստանալը մտահոգություններ է առաջացրել, որ օրենսդիր մարմնի նոր կազմը կարող է սահմանափակել արհեստական բանականության ոլորտի ծախսերն ու տվյալների կենտրոնների կառուցման ծրագրերը:




S&P 500-ի բոլոր ոլորտներն արձանագրեցին անկում

Ամենամեծ անկումը գրանցվեց տեխնոլոգիական ոլորտում՝ կազմելով շուրջ 7%: Շուկայի բազմաթիվ մասնակիցներ, այդ թվում՝ UBS-ը, օրվա կտրուկ անկումը բնորոշեցին որպես «ուշացած արձագանք»: Առավել մեծ ճնշման տակ էին հայտնվել կիսահաղորդիչների արտադրողները: Մասնավորապես, ֆինանսական արդյունքների հրապարակումից հետո QCOM-ի և ARM-ի բաժնետոմսերի գները նվազեցին, իսկ NVDA-ն կորցրեց իր արժեքի 9%-ը՝ տարեսկզբից ի վեր արձանագրելով բացասական եկամտաբերություն:




NeoClouds-ի ընկերությունները կրկին հայտնվել են անկման առաջատարների շարքում՝ ընտրություններից հետո դրանց բաժնետոմսերի արժեքն նվազել է շուրջ 20%-ով:



Բաժնետոմսերի շուկա

Բանկային հատվածը ևս չխուսափեց վաճառքի ճնշումից

Հատկանշական է, որ հավասար կշռված S&P 500-ն ավելի լավ արդյունք է գրանցել, քան շուկայական կապիտալիզացիայով կշռված ինդեքսը: Սա վկայում է տեխնոլոգիական խոշոր ընկերություններից դեպի շուկայի մյուս հատվածներ որոշակի ռոտացիայի մասին: Այդուհանդերձ, այս տարբերությունը դժվար է դիտարկել որպես դրական ազդակ, քանի որ երկու ինդեքսներն էլ զգալի կորուստներ կրեցին:



Բաժնետոմսերի շուկա | 3-րդ եռամսյակի հաշվետվություններ

Apple-ի 2026 թվականի չորրորդ եռամսյակի հասույթը կազմել է 114.5 մլրդ դոլար՝ տարեկան կտրվածքով աճը 12%: Զուտ շահույթը կազմել է 30.7 մլրդ դոլար, իսկ մեկ բաժնետոմսի հաշվով շահույթը (EPS)՝ 2.10 դոլար՝ աճելով 14%-ով: Աճին նպաստել են iPhone-ի վաճառքների ռեկորդային ցուցանիշները և ծառայությունների ուղղության հասույթի նոր առավելագույն մակարդակը:



AMD-ի 2026 թվականի երրորդ եռամսյակի հասույթը կազմել է 13.38 մլրդ դոլար՝ տարեկան կտրվածքով աճելով 45%-ով: Զուտ շահույթը կազմել է 2.43 մլրդ դոլար, իսկ EPS-ը՝ 1.46 դոլար՝ աճելով 95%-ով: Հիմնական աճի շարժիչը տվյալների կենտրոնների ուղղությունն է, որի հասույթն աճել է 97%-ով՝ հասնելով 8.5 մլրդ դոլարի՝ պայմանավորված EPYC պրոցեսորների և Instinct գրաֆիկական պրոցեսորների նկատմամբ պահանջարկով:



Բաժնետոմսերի շուկա | 3-րդ եռամսյակի հաշվետվություններ

Palantir-ի 2026 թվականի երրորդ եռամսյակի հասույթը կազմել է 2.31 մլրդ դոլար՝ տարեկան կտրվածքով աճը 96%: Զուտ շահույթը կազմել է 1.13 մլրդ դոլար, իսկ EPS-ը՝ 0.44 դոլար: Աճը հիմնականում պայմանավորված է եղել ԱՄՆ հատվածի հասույթի 148% աճով՝ հասնելով 984 մլն դոլարի: Ընկերության արդյունքներին էականորեն նպաստել է արհեստական բանականության լուծումների նկատմամբ պահանջարկը:




Toyota Motor (TM)-ը վերջին եռամսյակում սատացել է մոտ 84.9 մլրդ դոլարի հասույթ՝ տարեկան կտրվածքով աճը 8.6%: Զուտ շահույթը կազմել է մոտ 4.8 մլրդ դոլար՝ անկումը 19%, իսկ գործառնական շահույթը՝ մոտ 7.1 մլրդ դոլար: Հասույթի աճին նպաստել են հիբրիդային ավտոմեքենաների նկատմամբ պահանջարկը և միջազգային վաճառքների ընդլայնումը:




Պարտատոմսերի շուկա

Բաժնետոմսերի անկման ֆոնին պետական պարտատոմսերը դարձան ներդրողների հիմնական անվտանգ ապաստարանը: 2-ամյա պարտատոմսերի եկամտաբերությունը նվազեց 17 բազիսային կետով, իսկ 30-ամյա պարտատոմսերինը՝ 8 կետով:



Պարտատոմսերի շուկա | Տոկոսադրույքի սպասումներ


2027 թվականի տոկոսադրույքների փոփոխության վերաբերյալ շուկայի սպասումները կտրուկ վերանայվել են դեպի նվազում, այժմ հաջորդ տարվա ընթացքում տոկոսադրույքի նույնիսկ մեկ բարձրացում չի կանխատեսվում:



Դոլարին հաջողվեց որոշակիորեն ամրապնդվել՝ Ասիական առևտրային նստաշրջանի ընթացքում գրանցված անբարենպաստ զարգացումներից հետո:



Ուրբաթ ճապոնական իենը ներդրողների շրջանում պահանջարկ էր վայելում՝ հանդես գալով որպես համեմատաբար պաշտպանական ակտիվ:



Պարտատոմսերի շուկա | Սփոթ ոսկի

Գիշերային առևտրային նստաշրջանում ոսկու նկատմամբ պահանջարկը բավականին բարձր էր, սակայն ԱՄՆ առևտրային նստաշրջանի ընթացքում այն հայտնվեց վաճառքի ճնշման տակ: Սա արտացոլում է շուկայի մասնակիցների՝ իրացվելիության ապահովման նպատակով ակտիվների լայնածավալ վաճառքի միտումը:



WTI տեսակի նավթի գինը վերականգնվեց հասնելով շուրջ 91 դոլարի, իսկ Brent տեսակի նավթինը՝ 98 դոլարի: Այսպիսով, երկու նշաձողերն էլ մասամբ ետ բերեցին երեքշաբթի օրը գրանցված՝ գրեթե 9% անկումը: Անկումը հաջորդել էր միջանկյալ ընտրություններում Դեմոկրատական կուսակցության հաղթանակին: Դեմոկրատների վերահսկողության տակ գտնվող Կոնգրեսը կարող է ավելի ակտիվ քայլեր ձեռնարկել իրանական հակամարտության կարգավորմանն ուղղությամբ: Հատկանշական է, որ Հորմուզի նեղուցով բեռնափոխադրումներն արդեն իսկ վերականգնվել են՝ մոտենալով նախապատերազմյան մակարդակներին:



Ուկրաինայի կողմից Ռուսաստանի Ռյազանի նավթավերամշակման գործարանին հասցված հարվածը որոշակի ռիսկեր է առաջացրել նավթամթերքի գների չափավոր աճի տեսանկյունից: Գործարանն ունի օրական 340 հազար բարել վերամշակման հզորություն և համարվում է Ռուսաստանի խոշորագույն ՆՎԳ-ներից մեկը: Այնուամենայնիվ, միջադեպի ազդեցությունը շուկայի վրա առայժմ սահմանափակ է:




Բիթքոինը չկարողացավ դիմակայել տեխնոլոգիական ակտիվների նկատմամբ վաճառքի ճնշմանը: Այն ամբողջությամբ կորցրեց նախորդ օրերի աճը կրկին նահանջելով դեպի 75 հազար դոլարի մակարդակ:



Պղնձի շուկայի զարգացումները համապատասխանում են տեսական սպասումներին

Պահանջարկի աճն արտահայտվում է գների բարձրացմամբ՝ ձևավորելով շուկայի համար ավելի հստակ ազդակ: Ներդրողների տեսանկյունից, սակայն, սա կարող է նոր հնարավորություններ ստեղծել: Եթե նույնիսկ գների աճը չի հանգեցնում Չիլիում և Պերուում պղնձի արդյունահանման ծավալների արագ ավելացման, ապա առաջանում է մեկ կարևոր հարց. ո՞ր աղբյուրից է ապահովվելու շուկայի լրացուցիչ պահանջարկը բավարարող պղնձի հաջորդ տոննան:




Ապրանքահումքային շուկան կարող է կանգնած լինել նոր աճի ցիկլի շեմին:

Նախորդ խոշոր ցիկլերը սկսվել են dot-com և Nifty Fifty փուչիկների փլուզումից հետո, երբ ապրանքահումքայինները զգալիորեն գերազանցել են բաժնետոմսերի եկամտաբերությունը: Այսօր ապրանքահումքայինները պատմականորեն էժան են բաժնետոմսերի համեմատ: Հնարավոր կապիտալի ներհոսքը կարող է առաջացնել գների կտրուկ աճ: Հաջորդ խոշոր ներդրումային ռոտացիան կարող է լինել բաժնետոմսերից դեպի ապրանքահումքային ակտիվներ:




ԱՄՆ-ում վառելիքի պաշարները շարունակում են արագ նվազել:

Նախորդ շաբաթ դիզելային վառելիքի պաշարները կրճատվել են 3.6 միլիոն բարելով՝ հասնելով 99.3 միլիոն բարելի՝ 2003 թվականի մայիսից ի վեր նվազագույն մակարդակին: 2026 թվականի հունվարից դրանց ծավալը նվազել է 25%-ով: Միաժամանակ, նավթի ռազմավարական պաշարները (SPR) նվազել են մինչև 282.2 միլիոն բարել՝ 1982 թվականի հոկտեմբերից ի վեր ամենացածր մակարդակը: Հում նավթի առևտրային պաշարները նույնպես կրճատվել են՝ հասնելով 409.8 միլիոն բարելի: Էներգետիկ պաշարների նվազումը գնալով ավելի մտահոգիչ է դառնում:



Գնաճն այսօր և 1970-ականներին

Գնաճը յուրաքանչյուր մեղմացում մարդկանց մոտ ստեղծում է ճգնաժամի ավարտի պատրանք, մինչդեռ հաջորդ ալիքը կարող է նոր հարված հասցնել:



Ուրան արդյունահանող ընկերությունների բաժնետոմսերը կտրուկ անկում են ապրում, որը տրամաբանական չէ:

Հանքարդյունաբերական ընկերությունների բաժնետոմսերը տարեկան կտրվածքով նվազել են շուրջ 30%-ով, մինչդեռ ուրանի գինը գրեթե անփոփոխ է: Մինչև 2045 թվականը կանխատեսվում է՝

- Ուրանի առաջարկի շուրջ 30% անկում
- Պահանջարկի կրկնապատկում
- Մոտ 2 միլիարդ ֆունտի կուտակային դեֆիցիտ

Այս դեֆիցիտը համարժեք է համաշխարհային ուրանի ներկայիս արտադրության շուրջ 12 տարվա ծավալին:

Առաջարկի նվազման և պահանջարկի աճի պայմաններում ուրանի շուկան կարող է կանգնել գների էական աճի առաջ:



Կորպորատիվ հաշվետվությունների ցանկ

Այս շաբաթ 565, ընկերություններ հրապարակելու են իրենց ֆինանսական հաշվետվությունները 2026 թվականի երրորդ եռամսյակի համար: Շուկայի մասնակիցների կողմից առավել սպասված են Berkshire Hathaway Inc. (BRK-B), Cisco Systems, Inc. (CSCO), Applied Materials, Inc. (AMAT), Brookfield Corporation (BN), Barrick Mining Corporation (B), Nu Holdings Ltd. (NU) և բազմաթիվ այլ ընկերությունների հաշվետվությունները:

No.	Ticker	Company	Sector	Industry	Country	↓ Market Cap	P/E	Price
1	BRK-B	Berkshire Hathaway Inc	Financial	Insurance - Diversified	USA	1207.22B	14.19	564.34
2	CSCO	Cisco Systems Inc	Technology	Communication Equipment	USA	379.71B	28.97	96.45
3	AMAT	Applied Materials Inc	Technology	Semiconductor Equipment & Materials	USA	274.34B	29.81	345.69
4	BN	Brookfield Corp	Financial	Asset Management	Canada	102.40B	77.79	41.76
5	KKR	KKR & Co Inc	Financial	Asset Management	USA	88.24B	31.34	98.30
6	CEG	Constellation Energy Corp	Utilities	Utilities - Independent Power Producers	USA	87.16B	23.96	246.01
7	PBR	Petroleo Brasileiro SA Petrobras ADR	Energy	Oil & Gas Integrated	Brazil	70.33B	4.78	18.90
8	B	Barrick Mining Corp	Basic Materials	Gold	Canada	66.28B	10.36	40.27
9	TDG	Transdigm Group Incorporated	Industrials	Aerospace & Defense	USA	65.50B	35.93	1185.00
10	NU	Nu Holdings Ltd	Financial	Banks - Regional	Brazil	56.52B	15.92	11.70
11	OXY	Occidental Petroleum Corp	Energy	Oil & Gas E&P	USA	56.08B	16.62	56.10
12	FNV	Franco-Nevada Corp	Basic Materials	Gold	Canada	47.97B	32.50	248.73
13	VYLR	Vylor Inc	Basic Materials	Agricultural Inputs	USA	46.01B	-	68.95
14	HMC	Honda Motor ADR	Consumer Cyclical	Auto Manufacturers	Japan	45.73B	-	35.24
15	FERG	Ferguson Enterprises Inc	Industrials	Industrial Distribution	USA	45.59B	21.09	235.65
16	SE	Sea Ltd ADR	Consumer Cyclical	Internet Retail	Singapore	42.30B	28.24	74.60
17	SKYD	Skydance Corp	Communication Services	Entertainment	USA	40.94B	-	8.12
18	TTWO	Take-Two Interactive Software Inc	Communication Services	Electronic Gaming & Multimedia	USA	39.53B	-	211.39
19	IX	Orix Corp ADR	Financial	Financial Conglomerates	Japan	39.25B	9.91	35.84
20	NBIS	Nebius Group NV	Technology	Software - Infrastructure	Netherlands	35.93B	-	132.15

AraratBank

Այս շաբաթվա ԱՄՆ տնտեսական օրացույցը

Monday, Nov. 9						
	10:00 AM	Monthly Wholesale Trade	Sep	-	-	0.5%
	10:00 AM	Federal Reserve Bank of Chicago President Austan Goolsbee speaks at Leadership Greater Chicago event	-	-	-	-
	12:15 PM	Federal Reserve Bank of Richmond President Thomas Barkin speaks to the Greater Greer Chamber of Commerce	-	-	-	-
	12:15 PM	Fed speech: Richmond Fed President Tom Barkin	-	-	-	-
Tuesday, Nov. 10						
	6:00 AM	NFIB Index of Small Business Optimism	Oct.	-	-	97.9
	8:30 AM	CPI	Oct.	-	-	0.6%
	8:30 AM	Core CPI, M/M%	Oct.	-	-	0.3%
	8:30 AM	CPI, Y/Y%	Oct.	-	-	3.7%
	8:30 AM	CPI Core, Y/Y%	Oct.	-	-	2.6%
	10:50 AM	Fed speech: Dallas Fed President Lorie Logan	-	-	-	-
	11:00 AM	Federal Reserve Bank of New York Q3 Household Debt and Credit Report published	4Q	-	-	-
	1:30 PM	Fed speech: Kansas City Fed President Jeff Schmid	-	-	-	-
	6:30 PM	Fed speech: Philadelphia Fed President Anna Paulson	-	-	-	-
Wednesday, Nov. 11						
No events scheduled						

Thursday, Nov. 12						
	8:30 AM	Weekly Jobless Claims	Nov. 7	-	-	189K
	9:00 AM	FRB Cleveland President Beth Hammack moderated conversation with students from Ohio State University	-	-	-	-
	10:00 AM	Existing Home Sales	Oct.	-	-	4.0M
	1:10 PM	Fed speech: San Francisco Fed President Mary Daly	-	-	-	-
	2:00 PM	Monthly Treasury Balance	Oct.	-	-	-27B
	6:30 PM	Federal Reserve Bank of New York President John Williams speaks at UC Berkeley Alumni Salon panel discussion	-	-	-	-
Friday, Nov. 13						
	8:30 AM	PPI	Oct.	-	-	1.3%
	8:30 AM	Ex-Food & Energy PPI, M/M%	Oct.	-	-	0.7%
	8:30 AM	PPI,Y/Y%	Oct.	-	-	6.3%
	12:00 PM	Fed speech: San Francisco Fed President Mary Daly	-	-	-	-



060 408 005, 060 408 002, 010 592 301
87 Pavstos Buzand St, Yerevan, 0002
brokerage@araratbank@am